

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր.....	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ.....	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	9
5.1. Բյուջեի եկամուտներ.....	9
5.2. Բյուջեի ծախսեր.....	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	12
5.4. Պետական պարտք.....	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	13
6.1. Գնաճ.....	13
6.2. Ավանդներ և վարկեր.....	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	15
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Տնտեսական գործունեության սահմանափակումների վերացումից հետո նկատվում է տնտեսական անկման տեմպի որոշակի դանդաղում՝ սպասվածից ավելի քիչ չափով: Այսպես, 12-ամսյա տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ մայիս ամսվա ՏԱՑ-ը, 2019թ. մայիսի նկատմամբ նվազել է 12.8%-ով, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է -3.9%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ վատթարանալով 2.6 տոկոսային կետով:

Նախորդ ամիսների ՏԱՑ-ի ցուցանիշները վերանայվել են աճի ուղղությամբ, ինչի արդյունքում մարտ ամսվա անկումը -4.4%-ից դարձել է -4.1%, իսկ ապրիլինը՝ -17.2%-ից -16.3%: Արդյունքում, հունվար-մարտ ամսվա ՏԱՑ-ը 4.1%-ից դարձել է 4.2%, իսկ հունվար-ապրիլինը՝ -1.7%-ից -1.3%:


Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, շինարարության և ծառայությունների ոլորտները՝ համապատասխանաբար -4.0, -1.2 և -1.0 տոկոսային կետերով: Արդյունաբերությունն ունեցել է դրական նպաստում՝ 0.6 տոկոսային կետի չափով: Գյուղատնտեսության ցուցանիշները ամսական կտրվածքով շարունակում են չիրապարակվել:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Տարեսկզբին արդյունաբերության գրանցած բարձր աճերի շնորհիվ, այս ոլորտը դեռևս պահպանում է դրական նպաստումը ՍԱՑ-ին: Մայիսին արդյունաբերության անկումը կազմել է 3.9 տոկոս, սակայն հունվար-մայիս ամիսների ցուցանիշը, թեև զգալի նվազել է, բայց մնում է դրական՝ 2.4%:

Արդյունաբերության աճը շարունակում է հիմնված լինել հանքարդյունաբերության վրա: Այսպես, հունվար-ապրիլ¹ ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 4.2%, որին 4.7 տոկոսային կետով նպաստել է հանքարդյունաբերության 27.1% աճը: Մշակող արդյունաբերությունը նույն ժամանակահատվածում գրանցել է 1.7% անկում՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով -1.1 տոկոսային կետով: **Ստացվում է, որ հակառակ կառավարության՝ բարձր տեխնոլոգիական արտադրության ճյուղերով հանքարդյունաբերությունը փոխարինելու ջանքերին՝ հանքարդյունաբերությունը դարձել է ճգնաժամային փուլում տնտեսության միակ «հենարանը»:**

Էլեկտրաէներգիա և գազի մատակարարում ենթաճյուղը աճել է 5.9%-ով՝ ունենալով 0.9 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղը նվազել է 19.8 տոկոսով՝ արդյունաբերության ընդհանուր աճին ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Սկիզբ առնող ճգնաժամի արդյունքում ամենամեծ անկումն է գրանցվել շինարարության ճյուղում: Ընթացիկ տարվա մայիսին շինարարության ծավալը նախորդ տարվա մայիսի նկատմամբ նվազել է 27.0%-ով: Արդյունքում, շինարարության անկումը հունվար-մայիսին կազմել է մոտ -23.4%:

¹ Հունվար-մայիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ


Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %²



Ծառայությունների անկումը ավելի է խորացել: Համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված տնտեսական գործունեության սահմանափակումները առավելապես վերաբերում էին ծառայությունների ոլորտին: Այդ պատճառով, եթե մյուս ոլորտներում մայիս ամսին նկատվում է որոշակի անկման դանդաղում (12-ամսյա աճերի տեսանկյունից), ապա ծառայությունների ոլորտում անկումը մայիս ամսին ավելի է խորացել՝ հասնելով 19.4%-ի: Հունվար-մայիս ամիսների անկումը կազմել է 4.2%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազելով 4.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




² Ծառայությունների մարտ ամսվա ցուցանիշը վերանայվել է, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների ծառայությունների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5.5%-ից դարձել է 6.0%:

Առևտրի ծավալները մայիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել են 18.4%-ով: Առևտրի ծավալների 12-ամսյա անկումը նույնպես փոքր-ինչ դանդաղել է, սակայն կուտակային անկման տեմպն արագացել է: Հունվար-մայիս ամիսների առևտրի անկումը կազմել է 10.8%՝ նախորդ ամսվա 8.6%-ի փոխարեն:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման ծավալների կուտակային անկումն ավելի է խորացել: Մայիս ամսվա արտահանման ծավալները նախորդ տարվա մայիսի նկատմամբ նվազել են 8.6%-ով, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների արտահանման կուտակային նվազումը կազմել է 8.0%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ վատթարանալով 0.1 տոկոսային կետով:

Հարկ է նշել, որ արտահանման ցուցանիշները սկսած մարտ ամսից ենթարկվել են զգալի վերանայումների: Այսպես, մարտի 12-ամսյա անկումը 16.7%-ից դարձել է 16.6%, իսկ ապրիլինը՝ 30.3%-ից դարձել է 29.8%: Արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային անկումը փոքր-ինչ մեղմվել է՝ -8.1%-ից դառնալով -7.9%:


Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների արտահանման 42.6%, մանածագործական արտադրանքի 36.3% և պատրաստի սննդի արտադրանքի 11.7% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին

³ Հունվար-մայիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ունեցել են համապատասխանաբար 7.1, 2.7 և 2.8 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին դրական նպաստում է ունեցել սարքեր և սարքավորումների արտահանման 51.1% աճը՝ ունենալով 1.0 տոկոսային կետ դրական նպաստում: Սակայն, առավել զգալի՝ 6.0 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել հանքահումքային արտադրանքի 22.7% աճը: **Այսինքն, եթե չլիներ կառավարության կողմից բացասական առումով թիրախավորված հանքարդյունաբերությունը, ապա արտահանման անկումը հունվար-ապրիլ ամիսներին 7.9%-ի փոխարեն կլիներ 13.9%:**

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների նվազումը զգալի չափով խորացել է: Մայիս ամսվա ներմուծման ծավալները նախորդ տարվա մայիսի նկատմամբ նվազել են 21.8%-ով, իսկ կուտակային՝ հունվար-մայիս ամիսների անկումը կազմել է 12.8%՝ նախորդ ամսվա նկատմամբ վատթարանալով 2.4 տոկոսային կետով:

Ներմուծման ցուցանիշները նույնպես վերանայվել են: Այսպես, հունվարի ցուցանիշը 2.8%-ից դարձել է 3.5%, հունվար-փետրվարինը՝ 0.1%-ից դարձել է 0.4%, հունվար-մարտինը՝ -5.6%-ից դարձել է -4.3%, իսկ հունվար-ապրիլինը՝ -11.5%-ից դարձել է -10.4%:

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ: Առավել խոշոր բացասական դերակատարում է ունեցել ավտոմեքենաների ներմուծման 56.7% կրճատումը, ինչը ընդհանուր ներմուծման կրճատմանը նպաստել է 5.0 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև սարքեր և սարքավորումների (նվազումը՝ 10.9%), թանկարժեք և կիսաթանկարժեք

⁴ Հունվար-մայիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

մետաղների (նվազումը՝ 36.2%) և մանածագործական արտադրանքի (նվազումը՝ 24.5%) ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.8, 1.9 և 1.5 տոկոսային կետ:


Ներմուծման ծավալներին դրական նպաստում են ունեցել միայն պատրաստի սննդի 20.7% և հանքահումքային արտադրանքի 3.2% աճերը՝ համապատասխանաբար 1.4 և 0.5 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020թ. հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 8.7 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 7.1 տոկոսով: Ըստ ՀՀ ՎԿ պարզաբանման՝ ի տարբերություն ապրիլ ամսվա ցուցանիշների, մայիս ամսվա միջին ամսական անվանական աշխատավարձի հաշվարկում ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները (ըստ ՎԿ տվյալների՝ մոտ 9 հազար), որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ (ըստ ՎԿ տվյալների՝ մոտ 31 հազար) ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:

Բացի այդ, ՀՀ ՎԿ-ն վերոհիշյալ գործողությունն իրականացրել է նաև հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշների համար, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների միջին աշխատավարձի աճը նախկինում հրապարակված 9.3%-ից դարձել է 8.3%, իսկ մասնավոր հատվածում միջին աշխատավարձի աճը՝ 8.8%-ից դարձել է 7.2%:



Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ. հունվար-մայիս, %




Հատկանշական է, որ ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ գործազուրկների թիվը կայուն նվազել է ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների ընթացքում: Այսպես, փետրվարի վերջի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմել է 62242 մարդ, իսկ մարտի վերջին եղել է 61557 գործազուրկ: Ապրիլի վերջի դրությամբ գործազուրկների թիվը կազմել է արդեն 60708: Սակայն, պետք է հաշվի առնել, որ սա պաշտոնապես գրանցված գործազուրկների թվերն են, որոնք չեն արտահայտում իրական պատկերը: Առավել համապարփակ ցուցանիշը, որը կարող է հիմք լինել եզրակացությունների համար, ստացվում է տնային տնտեսությունների հարցման արդյունքում և հասանելի կլինի (առաջին եռամսյակի ցուցանիշը) օգոստոսին հրապարակվող հունվար-հունիս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հետ միասին:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)





2020 թվականի հունվար-մայիս ամիսներին նկատվում է ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժևորման տեմպի դանդաղում: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-մայիսին ՀՀ դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.3%, իսկ եվրոյի նկատմամբ՝ 3.4%: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում:


5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Հարկային եկամուտների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է: Հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են ընդամենը 0.9%-ով: Հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են մոտ 2.2%-ով, ինչը 5.1 տոկոսային կետով ավելի ցածր է քան հունվար-ապրիլ ամիսների աճը: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նվազել են 62.8%-ով, իսկ այլ եկամուտները՝ 12.1%-ով:

Հարկային եկամուտները մայիս ամսին նախորդ տարվա մայիսի նկատմամբ նվազել են 20.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ապրիլ ամսվա բացասական զարգացումներով: Սակայն, հատկանշական է, որ հարկային եկամուտների նվազումը սկսվել էր դեռևս փետրվար ամսից, երբ ՀՀ-ում չկար կորոնավիրուսի որևէ ազդեցություն (տե՛ս Գծապատկեր 11):

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %




Հարկային եկամուտների աճի կտրուկ դանդաղումը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի 3.5% և մաքսատուրքերի 27.2% անկմամբ, ինչպես նաև եկամտային հարկի աճի տեմպի 4.8 տոկոսային կետի դանդաղմամբ։ ԱԱՀ-ի և մաքսատուրքերի բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.2 և 1.6 տոկոսային կետ, իսկ եկամտային հարկը, թեև ունեցել է դրական նպաստում, այնուամենայնիվ, նախորդ ամսվա համեմատ նվազել է՝ 2.8 տոկոսային կետից դառնալով 1.4 տոկոսային կետ։

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերն ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-ապրիլ		Հունվար- մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	7.3	7.3	2.2	2.2
ԱԱՀ	2.5	0.8	-3.5	-1.2
Շահութահարկ	14.3	2.4	14.8	2.1
Եկամտային հարկ	9.7	2.8	4.9	1.4
Ակցիզային հարկ	11.2	0.8	4.9	0.4
Շրջանառության հարկ	9.6	0.3	9.6	0.2
Արտոնագրային հարկ	-98.4	-0.3	-98.6	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	34.8	1.0	24.7	0.6
Մաքսատուրք	-20.5	-1.2	-27.2	-1.6
Սոցիալական վճար	19.5	0.3	16.7	0.2
Այլ հարկային եկամուտներ	36.3	0.5	22.9	0.3
Պետական տուրք	2.4	0.1	-3.4	-0.1

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակվել է նաև մայիս ամսին: Այսպես, հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 19.8 տոկոսով՝ կազմելով 639.4 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերն աճել են 16.5 տոկոսով՝ կազմելով 603.9 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 2.3 անգամ՝ կազմելով 35.5 մլրդ դրամ:

Պետական բյուջեի ծախսերի աճը կապված է համավարակի հետևանքների չեզոքացման համար կառավարության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական միջոցառումների գծով ծախսերով: Դրանց ընդհանուր ծավալը հայտարարվել է 150 մլրդ դրամ, սակայն փաստացի իրականացված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվում, ինչը նվազեցնում է այդ գծով կառավարության թափանցիկությունը:

Կապիտալ ծախսերի աճի տեմպը հունվար-մայիս ամիսներին զգալի բարձր է, սակայն դրանք ցածր են նույնիսկ առաջին եռամսյակի պլանից՝ 42.4 մլրդ դրամից: Իսկ հունվար-հունիս ամիսների պլանը կազմում է 111.6 մլրդ դրամ, որը կապիտալ ծախսերի այս ծավալներով իրականացման պայմաններում չի կատարվի:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-մայիս ամիսներին իրականացված մեծ ծախսերի և ձևավորված ցածր եկամուտների արդյունքում պետական բյուջեն եղել է պակասուրդային: Պետական բյուջեի ծախսերի առաջանցիկ աճի հետևանքով, ձևավորվել է 25.6 մլրդ դրամ պակասուրդ: Իհարկե, ճգնաժամային ժամանակահատվածում կառավարությունը պետք է մեծացնի պետական ծախսերը՝ խթանելով տնտեսական ակտիվությունը: **Սակայն, պետք է նշել, որ պակասուրդի ձևավորման հիմնական պատճառը հարկային եկամուտների նվազումն է՝ նույնիսկ այն դեպքում, երբ կառավարությունը ոչ մի հարկային արձակուրդ չէր տրամադրել:**

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2020թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,433.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ աճելով 7.4%-ով: ՀՀ կառավարության պարտքը մայիսի վերջի դրությամբ կազմել է 6,937.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 8.7%-ով: Ընդ որում, աճը տեղի է ունեցել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պարտքի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 18.6% և 5.9%: Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 25.8 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.4%-ով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Տնտեսական անկման խորացմանը զուգահեռ արագանում է գնաճի տեմպը: Սկսած տարվա սկզբից, ՀՀ ԿԲ-ն վարում է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ պարբերաբար նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Սակայն, գնաճը մնում է ցածր մակարդակում և մայիս ամսին կազմել է 1.2%: Ընթացիկ տարվա հունիսին ԿԲ-ն ավելի կտրուկ քայլով՝ 0.5 տոկոսային կետով նվազեցրեց քաղաքականության տոկոսադրույքը՝ հասցնելով 4.5%-ի:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-մայիս ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2019թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 10.2 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը զգալի նվազել է, որը հիմնականում պայմանավորված է ձեռնարկություններից ներգրավված ավանդների ծավալի 0.8% նվազմամբ, ինչն ընդհանուր ավանդների աճին ունեցել է բացասական նպաստում՝ -0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումները ավանդների 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ




Բացի այդ, նվազել է ոչ ռեզիդենտների ավանդների աճի տեմպը՝ նախորդ ամսվա 20.7%-ից դառնալով 11.2%, որոնց նպաստումը ընդհանուր ավանդների աճին 5.4 տոկոսային կետից դարձել է 3.0 տոկոսային կետ:

Ավանդների ծավալի 10.2% աճին 5.1 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների 10.7% աճը:

Վարկերի աճի տեմպը մնում է բարձր: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 17.8 տոկոսով:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ




Վարկերի աճին հիմնականում նպաստել են սպառողական, հիպոթեքային և ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերը՝ համապատասխանաբար 5.2, 3.5 և 3.4 տոկոսային կետերով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերոհիշյալ զարգացումները, որոնք արտացոլում են ՀՀ-ում տնտեսական ճգնաժամի սկզբնական փուլը, պայմանավորված են համավարակի արագ տարածումը կանխելուն ուղղված միջոցառումներով: Կառավարությունն այդ նպատակով ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում պահպանեց խիստ սահմանափակումների ռեժիմը, որը, սակայն, ոչ մի արդյունք չտվեց համավարակի տարածման տեսանկյունից: Եթե ապրիլի սկզբին հաստատված դեպքերը կազմում էին 532, ապա ապրիլի վերջին այդ թիվը հասել էր 2066-ի, իսկ մայիսի վերջի դրությամբ՝ 9282-ի: Այսինքն, հաստատված դեպքերի աճի տեմպը ապրիլին եղել է 3.9 անգամ, իսկ մայիսին՝ 4.5 անգամ: Հունիսի 25-ի դրությամբ հաստատված դեպքերի թիվը կազմում է 22488:

Գծապատկեր 19. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



1 000 000 բնակչի հաշվով դեպքերի թվով Հայաստանը գտնվում է աշխարհում 11-րդ տեղում՝ գերազանցելով այնպիսի երկրների, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իտալիան: Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում դեռևս երկար է պահպանվելու տնտեսական ցածր ակտիվությունը, քանի որ հիվանդության տարածումը գործունեության մի շարք տեսակներ սահմանափակելուց բացի (եթե նույնիսկ կառավարությունը չի սահմանում արգելք, մարդիկ խուսափում են մի շարք ծառայությունների տեսակներից, չեն գնում երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և այլն) բացասական է ազդում ներդրումների վրա, հատկապես, երբ առկա է չափազանց բարձր մակարդակի անորոշություն:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Համավարակի պատճառով ներմուծված տնտեսական գործունեության սահմանափակումների մեծ մասը հանվել է մայիսին: Սակայն, տնտեսությունը չի վերականգնվել, իսկ կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել:** Ամենամեծ անկում ապրող ոլորտը շարունակել է մնալ շինարարությունը, որի անկումը միայն մայիսին կազմել է 27%, իսկ հունվար-մայիս ամիսներին՝ 23.4%: Արդեն տեսանելի է, որ արագ վերականգնումը հնարավոր չէ, և կորցրած տնտեսական արդյունքը հնարավոր կլինի հետ բերել միայն տարիներ անց:

2. **Համավարակի տարածման խոչընդոտմանն ուղղված կառավարության գործողությունները անարդյունավետ են եղել:** Ինչպես ապրիլ ամսվա խիստ սահմանափակումները (որոնք խոշոր վնաս հասցրին տնտեսությանը), այնպես էլ մայիսին իրականացված կառավարության

գործողությունները (կամ անգործությունը) չեն զսպել վարակի տարածումը, ինչի արդյունքում կորոնավիրուսով վարակման հաստատված դեպքերի քանակը հասել է մտահոգիչ մակարդակների:

3. Հարկաբյուջետային քաղաքականությունը զուրկ է թափանցիկությունից և տրամաբանությունից: Կառավարության կողմից հայտարարվել է, որ ճգնաժամին հակազդելու նպատակով նախատեսվում է իրականացնել լրացուցիչ 150 մլրդ դրամի չափով ծախսեր: Սակայն, դրանց փաստացի իրականացման մասին չկա հրապարակային տեղեկատվություն: Բացի այդ, կառավարությունը չի իրականացնում սահմանված կապիտալ ծախսերը, ինչը լրացուցիչ զսպում է տնտեսական ակտիվությունը: Հաշվի առնելով շինարարության հետճգնաժամային ժամանակահատվածի աննախադեպ անկումը՝ կապիտալ ծախսերի թերակատարումը չունի ոչ մի արդարացում:

4. Տնտեսության միակ աճ արձանագրող ճյուղը մնացել է հանքարդյունաբերությունը: Հակառակ կառավարության՝ բարձր տեխնոլոգիական արտադրության ճյուղերով հանքարդյունաբերությունը փոխարինելու ջանքերին՝ հանքարդյունաբերությունը դեռևս մնում է տնտեսության շարժիչ ուժը, ինչպես արտահանման, այնպես էլ արտարժույթի ներհոսքի և հարկային եկամուտների տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: